ԳԵՐ· ՄԱԿԱՐ ԵՒ ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՔ ԵՒ ԹԱԴԷՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ·

Ըստ հրաւիրանաց Վ. Հայրապետի՝ Գերապատիւ Մակար Ս· Արքեպիսկոպոս Թեմական Առաջնորդն վիճակին Տփխեաց՝ ի 24 ամսոյս, Գերապատիւ Սարգիս Ս· Արքեպիսկոպոս Թեմական Առաջնորդն Արցախոյ՝ և Հոգեզգօն Թադէոս Ս· Եպիսկոպոս Առաջնորդական Փոխանորդն Էխալցխոյ՝ ի 25ն ամսոյս եկին ի Ս· Էջմիածին։

ՄԵԾ· ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆԵԱՆՑ·

Էխալցխացի Մեծապատիւ Վարդան Վարդանեանց բարեպաշտ անձն, — որ յօգուտ Ազգի և Եկեղեցւոյ բաւական մեծ բարերարութեամբք բազմաճանօթ է և նորա արդիւնքներ Էխալցխայի Հայոց ներկայ և ապագայ սերնդեան մէջ արժանաւոր յիշատակներով մշանջենաւորեալ են, այս անգամ ևս — իձեռն Հոգեզգ· Թադէոս Եպիսկոպոսի Երէց- Հարէ-ը ուղղեաց ի նպաստ Ն'եմարանի Ս· Էջմիածնի։

Կդովեմք յիշեալ անձի սոյնպիսի բարեպաշտութիւնը ևս՝ փոխարինելով մեր հրապարակական շնորհակալութիւնը։

ՀԱՆԴԷՍ

ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՆ

ԱՆՈՒԱՆ ՎԵՀ· ՀԱՅՐԱՊԵՏԻ

ԵՒ ՆԱՒԱԿԱՏԵԱՑ

ԲԱՑՄԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ Ս· ԷՋՄԻԱԾՆԻ·

Ի 28 ամսոյս՝ Վ. Հայրապետի ամենայն Հայոց Տ· Տ· Գէորգեայ Սրբազնագոյն Կաթուղիկոսի Ընուան տօնախմբութիւն դիպելով՝ բարեյարմար և արժան դատուած էր ի նոյն աւուր կատարել Ն'եմարանի բացման նաւակատիքը՝ ի պատիւ և իփառաւորութիւն անուան բազմարգիւն Հիմնադրի սորին և արժանաւոր Գլխոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ։

Ըստ այսմ կարգադրութեան՝ արդէն կարևոր և հնարաւոր պատրաստութիւնքը ևս հոգացուած էին, և ամսոյս 27ի յերեկոյեան ժամուն նախ Տօնախմբութեան հանդէսը սկսաւ և շարունակեցաւ հետևեալ կարգաւ։

Էրր նշանաւոր՝ բազմաբաղձ և յաւիտենական յիշատակաց արժանի աւուր նախընթաց յերեկոյին՝ ըստ նախնի սովորութեան՝ իպատիւ անուան Հայրապետի՝ Ս· Գէորգեայ նախատօնակն պիտի կատարուէր զկնի սովորական երեկոյեան ժամերգութեան, զանգակաց արտաքոյ կարգի վայելուչ հնչմանց արձագանքն ի վին կդղդեր Արարատեան դաշտը և դոգցես աւետեաց քաղցրալուր եղանակներքը կընծայէին լսելեաց և հրաւէրներ կուղղէին Հայկազանց. ի նոյն միջոցի՝ Կաթուղիկոսաց յատուկ եղած փառաւոր հանդիսով՝ Վ. Հարանի արտաքին դռան առջև՝ համայն Միաբանութիւն Մայր Աթոռոյս՝ եկեղեցական զգեստներով ըստ իւրաքանչիւր կարգի և աստիճանի զարդարուած, խաչվառներով և լապտերօք թափօր յօրինած, նա և ժողովրդեան մեծ բազմութենէ շրջապատեալ կանգնած էր. Վ. Հայրապետ իջաւ ի Վ. Հարանէ, և ի թիկունս՝ շուրջառ և ի ձեռս Խաչ և Դաւազան ընդունելով, ընդ դլխովն Ամպհովանի, յառաջոյ՝ Կաթուղիկոսական ՔՕՂ.

ունելով, և երկու զոյգ բուրվառներ, և Կաթուղիկոսական պատուոյ և զարդու Խաչ և Գաւազան երկու քովերէն՝ պաշտելով սովորականը, երգեցիկ Դպիրք և ձայնագրեալ Հրաշափառ Աստուածը կգեղեցկեցնէին, և այսպէս հանդէսն սիգաձեմ յառաջանալով դէպ ի Ս. Տաճարն, երգեցիկ Դպիրք՝ — որք յառաջընթաց շրջիչներու յետուստ կերթային, և զհետ նոցա էին Սարկաւագունք, Վարդապետք, Եպիսկոպոսունք և ապա Վեհ. Հայրապետ,— երբ մտին ի ներքս, սկսան երգել Ո-ւրախ լեր սո-ւրբ Եկեղեցի շարականը՝ մինչև Վեհ. Հայրապետ հասաւ Իջման Տեղւոյ Սեղանոյն առաջ և սաղմոսեց Ո-ւրախ եղէ ե՝ ոյժ սաէին ինչ ի սո-ն Տեառն երկնից-ս, և յաւարտմանն՝ Սո-ւրբ Եկեղեցեա-ս Վարոզին յետոյ Ի ՏԵՂ Տաճարին աղօթքը մատոյց առ Տէր, և ապա Սո-ւրբ Խաչ-ս քարոզը ասացաւ, և դարձաւ առ ժողովուրդն Պահպանիչ ասաց և օրհնեց զնոսա։

Ընյսու հետև Ե- Լս խաղաղ-ութեան քարոզով նախատօնակն կատարեցաւ Իջման Տեղւոյ առաջ, և այսպէս Ուրբաթ երեկոյեան հանդէսը վերջացաւ։

Ի յաջորդ Շաբաթ աւուրն՝ առաւօտեան ժամերգութիւնը ևս արժանաւոր հանդիսով և ըստ աւուր պատշաճի կատարեցաւ։ Օկնի արձակման Եկեղեցւոյ սակաւ միջոց անցանելով՝ Մաղթանքի զանգակը հնչեցաւ, և Միաբանութիւնս Վեհարանի առջև բոլորուելով՝ (Ներսեսեան աշակերտք ևս մեկուսի բոլորեալ կանգնած էին)՝ Մաղթանքը ասացին, յորում մի ձառ ևս կարդացուեցաւ։ Ապա եկին ի Վեհարան և մեր Սրբազնագոյն Հայրապետի Ընջը համբուրեցին և Տօնախմբութիւնը շնորհաւորեցին։ Սոցա յաջորդեցին Ներսեսեան աշակերտք, և ապա ժողովուրդք, և հուսկ յետոյ Վարդապետաց երկսեռ Դպրոցաց աշակերտք։ — Յայսմ միջոցի ևս երգեցիկ Դպիրք մեկուսի կանգնած՝ Ո-ւրախ է Նոր պատրն (ԲԱԲԷ), Մաղթանք (ՈՎ ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ ԼՈՒՐ ՄԵՐ ԲԱՐԲԱՌ) և ի Տարէ-պարտն (ՀՆԱԶԵՍՑԵՆ ԼԱՐԲ) վերնագրեալ երգերը երգեցին։

Այն հանդիսի աւարտմանէն յետոյ սկսան Ներսեսեան աշու Ժամու զանգակները հնչել, և Պատարագի Ս. Խորհուրդը պաշտուեցաւ։ — Պատարագիչն էր Հոգեզգօն Սանփան Եպիսկոպոս Սանտալճեանց։ — Ս. պատարագէն անմիջապէս յետոյ սկսաւ Ներսեսեան բացման նաւակատեաց հանդէս։

Թափօրն այսպէս կազմուած էր։

Պատարագամատոյց Եպիսկոպոսն ի ձեռին ունելով մեծ Խաչ, յորում զետեղեալ է մասն ի Կենաց Փայտէ, զառաջեաւն մոմակալք և բուրվառք, որոյ աջ և ձախ քովերէն Արքեպիսկոպոսունք, Եպիսկոպոսունք, Վարդապետք շուրջառներով՝ և Սարկաւագունք և երգեցիկ դպիրք շապիկներով՝ Նշանաւոր Շարականը *) եղանակելով Մայր Տաճարէն դուրս եկին և ուղղեցին զընթացս դէպ ի Ներսեսեան երթալոյ հիւսիսային պարսպի արտաքին մեծ դռնէն ելնելով։ Ներսեսեան

(*) Ինչպէս բաւական ժամանակէ հետէ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի մէջ շատ Շարականաց և Ս. Պատարագի ամբողջ երգեցողութիւնք ձայնագրութեամբ կերգուին, նոյնպէս այսօրեայ բոլոր Շարականք և երգք ևն. Հայկական ձայնագրութեամբ եղանակուեցան։

աշակերտք ամենէն առաջ կերթային, որոց եռեէն էին Ա-սոս-ցին նշանակեալ Վարդապետքն Երժ. Սուքիաս Պարզանց (որ և Փոխանորդ Տեսչի), Յովհաննէս Երևանեան, Երիսատակէս Սեդրակեան և Գէորգ Սուրէնեանց: Օգնի սոցա էին Դպիրք ևն:

Իսկ մերձաւոր քաղաքներէն (Երևանէն, Աղէքսանդրապոլէն ևն) և գիւղերէն եկած ուրախ՝ համակիր և եռանդուն երկսեռ ժողովրդեան բազմութիւն այնքան խուռն լցուած էր, որ բաւական լայնարձակ ճանապարհի մէջ հանդէսը դրեան թէ շըրջապատելով՝ հոգեզուարճ մխիթարութեամբք և զգացմամբք ի միասին կերգային դէպ ի Հեմարան բուռն անձկանօք: — Հեմարանի գունէն ներս մտանելոյ ժամանակն խուռն բազմութիւն թէպէտ հանդէսը պիտի շփոթէր, սակայն չկարենք աւելի ինչ մեղադրանք դնել նոցա վերայ, և կդոհանամք Աստուծմէ՝ զի ի նոյն միջոցի որպիսի և իցէ մի ծանր վանդ չեսնուեցաւ: Ինչ և իցէ:

Վ. Հ. Այրապետ՝ յարձակման Ս. Պատարագին՝ կանխաւ սուրբ Տաճարէն ելնելով՝ ուղղակի առանձինն կառքով իջած էր ի Հեմարան և ի փառաւոր Անդիսարանն բազմեալ, ուր թափօրի հանդէսն ևս հաւաքուեցաւ. ընդ նմին ժողովրդեան բաւական մեծ բազմութիւն, և ի Անդիսարանի մի կողմն՝ արք, և ի միւսումն՝ կանայք կացած էին: Ի հարաւային կողմն՝ այս ինքն ի ճակատին՝ Վ. Հ. Այրապետ շուրջառ ի թիկունս, և ի ձեռս Խաչ և Դաւազան՝ երկաստիճան պատուանդանի վերայ Աթոռոյ առջև կանգնելով և ի բոլորտիքն Միաբանութիւնն ևն, և կեդրոնն (մէջ տեղը) բաց մնալով՝ Վ. Հ. Այրապետի յանդիման բոլորեալ կանգնած էին նոր աշակերտք կամ Դասանդաւորք:

Իսկ դարձեալ մեծ բազմութիւնն Անդիսարանէն դուրս՝ է որ վերը սանդղոց վերայ սրահը և է որ բակը ևն. խռնուած, հեռուէն կըդիտէին:

Ի-Լա Խալաղո-Ղեան քարոզով՝ Օրհնո-Ղեն և ֆառֆ մաղթանքէն զկնի՝ Այսօր Երկնայինք ո-ւրախացան Շարականը դպիրք սկսան երգել, և դիրք և Աւետարան՝ հանդիսին յարմար քարոզ, իսկ աղօթքը Վ. Հ. Այրապետ կարդալէն յետոյ՝ Խալահանգիսպ եղաւ: Պահպանիչէն առաջ մի ճառ կարդացուեցաւ, և յետոյ Հեմարանի նուիրուած Ուղերձը երգեցին, որ կըրկնուեցաւ, և մի ուրիշ երգ ևս եղանակելէ վերջն՝ Վ. Հ. Այրապետ համառօտ՝ բայց ազդու և սրտաշարժ մի ատենաբանութիւն խօսեցաւ, յորում բացատրելով մեր Ազգի և Եկեղեցւոյ ապագայ ապահովելոյ համար Ազգիս ի ներկայիս ունեցած անհրաժեշտ պարտաւորութիւնքը՝ որ և օր աւուր նոր օրինակ դէպքերով աւելի զգալի կլինին մեզ, նա և մերի նախնեաց ընդունած անգին և պատուական աւանդները անկորուստ պահպանելոյ և մշանջենաւորելոյ հետ՝ Այրենեաց աւերակաց վերայ երբեմն վերաշինութիւն բերելոյ և Այաստանի վերակենդանութիւն և սուրբ Եկեղեցւոյս մեծապայծառ յարատեւութիւն նուիրելոյ յոյսը հաւատով և սիրով արդիւնաւորելոյ համար ամենակարևոր միջոցները՝ ընդարձակ և պարզ փաստերով յայտնեց, և այսոցիկ ամենայնի իրագործութիւնը և կատա-

բումը տեսնելոյ համար անձնանուէր, ուսեալ և բարեկիրթ հոգևորականաց պէտքը և գերազանց և յատուկ յարմարութիւնը զգացոյց, որոց կարօտութիւն այլ ևս անհրաժեշտ եղած էր և հարկ էր պատրաստել, և նոյն նուիրական նպատակով ներկայ Ճեմարանի շինութեան ձեռնարկելը, աւարտելը և բացման հանդիսաւոր նաւակատեաց աւուր նշանաւոր՝ վսեմ և նոր դարագլուխ լինելը ևս յայտնելով, խանդակաթ եռանդեամբ բարեմաղթեց և աներկմիտ ակնկալութիւն ցըցոյց Ճեմարանի աշակերտաց գէթ պատանիները ընդունելով՝ իւր բուն և գլխաւոր նպատակին համաձայն Եկեղեցւոյ Պաշտօնէութեան կընուիրէ, և այս նպատակին մէջ աւելի մեծայոյս լինելոյն զըբաւականները յիշեց և խրախուսեց զԱրժ. փոխանորդն Տեաչի, և զԱրժ. Ուսուցիչ Վարդապետս և զայլս. և այլ բաւական պատշաճ և գեղեցիկ խօսքեր ևս ուղղելով առ եկեղեցականս, ժողովուրդ և առ աշակերտս, խնդրեց և յուսացաւ որ՝ փոխադարձ և ըստ իւրաքանչիւր աստիճանի և կարգի ձեռնտուութիւնքը և բարոյական աջակցութիւնքը ամենայն Հայ կզգայ և կփութայ ի կատարումն, որով Ճեմարանի ունեցած թեթև պակասութիւնքը ևս արժանաւոր խնամքով և անխոնջ ջանք և փութով լրանալով՝ սուղ միջոցի մէջ կյաջողվի Հայ Ազգի համար ընտիր անդամներ և Եկեղեցւոյ անձնանուէր և բարի պաշտօնեայներ ընծայելոյ եւն եւն։

Յանձնարարութիւնը բարեմաղթութեամբք կնքուեցաւ, և հանդիսականաց իւրաքանչիւրին երեսաց վերայ տպաւորեալ նոր ոգևորեալ համակրութիւն, սէր և մեծայոյս խնդութիւն կարտափայլէր, որք անձկայրեաց և բաղձաբաղձ սրտից բարախմանց ընկերացած կերևէին։

Այս Հանդէսը ևս վերջացաւ Պահպանիչով. յայնժամ հանդիսականք սկըսեալ յԱրքեպիսկոպոսաց մասեան ի համբոյր Վսեհ. Կաթուղիկոսի Ս. Աջոյն և ի խնդակցութիւն շնորհաւորութեան բացման Ճեմարանի, և ապա Վսեհ. Հայրապետի հետ Միաբանութիւնս և այլք մեկնեցան ի Ճեմարանէ և եկին ի Վանս։

Սեղանատան զանգակը հնչեցաւ, Վսեհ. Հայրապետ և համայն Միաբանութիւն և հրաւիրեալք եկին ի սեղան և ճաշ վայելեցին. և ի նոյն միջոցի երբեմն զինուորական նուագածուաց խմբին եղանակներ, և մերթ դպրաց ազգային ընտիր և գեղգեղ երգեր՝ օդոյն գեղեցկութեան հետ գեղեցիկ և զմայլելի տեսարան կկազմէին։

Ի սեղանատան սովորական օրհնութեան մէջ*)՝ Վսեհ. Հայրապետ՝ լիաշուրթըն բերանով և զգածեալ սրտիւ օրհնեց զՄիաբանութիւն Մայր Աթոռոյս և զհամայն ուխտ Եկեղեցւոյ խմ զընդհա-

(*) Հին սովորութիւն է, զի երբ Հայրապետն ի հանդիսաւոր աւուրս՝ ընդ Միաբանս սեղանակից լինի, երբեմն երբեմն երաժիշտ մի Վարդապետ ի մէջ սեղանատան՝ Վեղարը գլխէն վեր առած և ի ձեռին բռնած՝ կկանգնի, և բարձր ձայնիւ կերգէ՝ Հրամայեա՛ Տէր օրհնութեամբ առնել և Հայրապետն ըստ պատշաճին օրհնութիւն կը տայ։ Այս է սովորական օրհնութիւնը։ Եւ իւրաքանչիւր անգամի օրհնութեան յաւարտին, Վարդապետն կեղանակէ Ամէն, Եղիցի՛ եղիցի։ Եւ յետոյ գինւոյ բաժակներ կլցուին և կխմեն։

նուր Աղգս Հայոց՝ որ են ընդ ոլորտս տի-
եզերաց, մաղթեց ի Տեառնէ զհաստա-
տութիւն և պայծառութիւն Մայր Ա-
թոռոյս Էջմիածնի և Վ. անօրէից, Եկե-
ղեցւոյ Հայաստանեայց, Ն՛եմարանի և
ամենայն ուսումնարանաց և դպրոցաց
Հայոց, բարեմաղթեց վասն կենաց Օգոս-
տափառ Կայսեր Համայն Ռուսաց և Կայ-
սերազուն Փոխարքայի Լեհն։

Իսկ զկնի կերակրոյն՝ տրգեղէն ու-
տելոյ միջոցին՝ յանուն Վ. Հ. Հայրա-
պետի բաժակ առաջարկուելով՝ Ղ-
Ք-ը Կենաց և Քրիստոս Շ. արականի
երգուելէն յետոյ՝ կրկնուած և երեքկը-
նուած ԿԵՑՑԷ՝ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ
սրտեռանդ և բարձրագոչ աղաղակներն
զերկինս կթնդացնէին և արտաքուստ հը-
րացանաձգութեանց արձագանքներ ևս
միացած էին։

Յետ այսորիկ՝ Վ. Հ. Հայրապետ վասն
կենաց Օգոստափառ Կայսեր բաժակ ա-
ռաջարկեց, և Թագաւոր փառաց շարա-
կանը երգելէ վերջը՝ Կեցցէներու աղաղակ-
ներով և հրացանաց արձագանքներով
բաժակներ դատարկուեցան։

Յաւարտման սեղանոյն՝ վասն յառա-
ջադիմութեան և պայծառ յարատևու-
թեան և ապահովութեան Լեհն. համայն
Աղգիս Հայոց բաժակ առաջարկելով Վ. Հ.
Հայրապետ՝ և Թագաւոր Երկնաւոր, զԼ-
կեղեցի սն անշարժ պահեսա Շ. արականը եր-
գուեցաւ և Հայր Ոերով վերջացաւ։

Ի գիշերին պայծառ լուսավառութիւնք
և գեղեցիկ հրախաղութիւնք եղան, և
նուագածուաց խումբն ընտիր եղանակ-
ները գեղգեղեց, որ ի յաջորդ Կիւրակէ
օրն և յերեկոյին ևս նոյնպէս նուագեց։

Ա՛հաւասիկ այսքանով համառօտ իմն
ամփոփելով Վ. Հ. Հայրապետի Ընուան
տօնախմբութեան և Ն՛եմարանի նաւակա-
տեաց հանդէսները*), աստանօր կ՚յաւե-
լումք ըստ կարգին հրատարակել ի բա-
զում ճառից և ոտանաւորաց միայն կար-
դացուածներուն հետ՝ նա և երգուած Ու-
ղերձը հանդերձ ձայնագրութեամբ։

Յաջորդ թերթի մէջ կհաղորդեմք
հաւաքուած և ընդունուած աշակերտաց
անուանց և այլոց, դասական և առար-
կայից բաժանմանց ցուցակները, անհրա-
ժեշտ կարևոր եղած նոր կարգադրու-
թիւնը, բոլոր դասատուաց անուանքը և
իւրաքանչիւրին առարկայքը ևն ևն։

(Ի Մաղնանէն կարդացուած).

Վ. ԵՀԱՓԱՌ ՏԷ՛Ր

ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՄԵԾ ՔԱՀԱՆԱՅԱՊԵ՛Տ.

Ի սերկեանս աւուր հանդիսի հրաշափառա-
զոյնս տօնի անուանակոչութեան Հերոյին Աս-
տուածընտիր Մեծի Քահանայապետութեան Ա-
ռաքելապատիւ Գլխոյ Հայաստանեայց Սուրբ Եկե-
ղեցւոյ, խնդութեան ձայնք ամենուրեք լսելի լինին
խառն ընդ հոգևորական երգոց մխիթարութեան։
Նոր և անհա Ռմատ է օրս այս խնդութեան վասն
մեր Վ. Հ. Հայրապետ Տէր, քանզի որում խանդակաթ
անձկանօք մնայաք, տեսանեմք այժմ եկեալ հա-

(*) Զմոռանամք յիշելոյ նա և՝ զի մի և նոյն
օր թէ Վ. Հ. Հայրապետի անուան տօնախմ-
բութիւնը և թէ Ն՛եմարանի բացումը շնորհաւո-
րող և բարեմաղթու բազում հեռագիրներ ստա-
ցուեցան ի Տփխեաց, Ախալցխայէ, ի Գղլարէ, ի
Նոր-Նախիջևանէ, Աստրախանայ, ի Ս. Պ.
Բուրգոյ ևն. ևն։

Ընդ այսպիսի բարեգուշակ համակրութիւնս և
զղացմունս յանչափս ուրախ եմք։

սեալ ի խնդութիւն մեզ և ընդհանրութեան ազգիս, նա և համայն հոգևորականս դասու, զյր ուրախութեան և միխիթարութեան շարժառիթ լեալ են արդիւնալից աւուրք մեծապանծ Հայրապետութեան Ձերոյ, վասն որոյ և հարազատ մանկունքս մօրս լուսոյ Սրբոյ Էջմիածնի ի մի խմբեալ սրտաուչ մաղթանօք և հոգ՝ որ ուրախութեամբք, տօնելով տօնեմք զտօնեալն այսօր յընդհանուր Ազգիս մերմէ զանուանակոչութեան Ձերոյ զտօն հրաշափառ. զի յօրէ անտի զահակալութեան Ձերոյ ի Ցաջորդութիւն Սրբազան Առաքելոցն Թադէի և Բարդուղիմեայ և Սրբոյ Հօրին մերոյ Գրիգորի Մեծի Պարթևի փոխի մեծ կալեալ է՝ յանձին զ՝ի վերուստ Ձերում՝ Հովուապետութեան յանձնեցեալ զեկեղեցիս, զԼանօրայս զԴպրոցս ածել ի բարգաւաճումն և ի պայծառութիւն, յորս յամենեցին տեսանին նորանոր բարեկարգութիւնք, որք լինելոց են ձեռնտուք և նպաստողք ի լուսաւորութիւն և ի բարօրութիւն արդի և ապագայ սերնդոց Ազգիս։ Ապա ուրեմն ի ՃԱՀ է այսօր ամենայն ազգայնոց օրհնելով օրհնել զանգին զկեանս Վեհիդ և բարեմաղթել զլեռնի յաջողութիւն առ ի տեսանել զբազմաբեղուն արգասիս քրտնաթոր վաստակոց Ձերոց։ Սովին աղագաւ յանդիման եկեալ բարեբարիդ շնորհաւորեմք նա և զտօն Ձեր հրաշափառագոյն ընդ անուանակցի Ձերոյ Սրբոյն Գէորգայ քաջամարտիկ զօրավարի, քանզի արդարև ոչ միայն անուանակից գտանիք Սրբոյն, այլ և գործոց նորա նմանող և ազգի ազգի գործովք առաքինութեանց և ճգնութեանց, նա և ի փոյթս լուսաւորութեան համարէն Ազգիս զարգացման գերազանց իսկ երևիք. քանզի նա ըստ երդոյն՝ եղև պարծանք ազգի մարդկան, Դուք ևս. Աստուածընտիր Հայրապետ, գերագոյն իմն ունիք ըստեղի արժանաժառանգ ի պէտս բարեզարդութեան եկեղեցեաց և պաշտպանութեան լուսաշաւիղ մերոյս Կրօնի։ Նա հրաշալի ճգնութեամբն ի յերկրի նահատակեցաւ և ի յերկինս պսակեալ փայլեցաւ, իսկ Դուք ի վեր քան զմարդկային կարողութիւն բարոյապէս ճգնիք և բոլորանուէր նահատակութեամբ ի յառաջադիմութիւն մտաւոր և բարոյական զարգացման ազգիս և Հայացի դպրութեան օր քան զօր յաւելուք զթիւս զլուսոյցս լուսաւորութեան, և ի խնամս պահպանութեան բանաւոր հօտին յաւէտ շահատակեալ հոգևորապէս պահպանէք զնոսա յերևելի և աներևոյթ թշնամեաց և կորաղլուխ. առնէք զընդդէմ հաւատոյս մերոյ զյարուցեալս, որպէս վայելէ առնել քաջ Հովուապետի՝ որ առաջնորդիցէ զազգ և զժողովուրդ Տեառն ի գիտութիւն ճշմարտութեան, առնելով զնա Ազգ սուրբ՝ ժողովուրդ սեպհական՝ նախանձաւոր գործոց բարութեան՝ և հետևող քաղաքակրթութեան լուսաւորեալ ազգաց աշխարհի։ Ցայն սակս ահա, քաջարթուն Հովուապե՛տ, ի բոլոր սրտէ աղաչեմք զամենաբարին Աստուած ի տրիտուր բարեխորհուրդ գործոց Ձերոց և ի փոխարէն սոյն օրինակ ազգասիրական նահատակութեանցդ, որք հաստատիցեն արասցեն անշուշտ զպարծանս եկեղեցւոյ մերոյ և յարատև զազգիս մերոյ զբարօրութիւն, պսակեալ զՁեզ յերկինս ընդ դասս սրբոց Հայրապետացն մերոց Գրիգորիսեանց և Ներսիսեանց, յերկարել նաև յերկրի ասա զերջանիկ կենաց Ձերոց զթիթ, որպէս զի քև երջանկացեալ և մեք հոգևոր մանկունքս եկեղեցւոյ և ուռճացեալ պանծասցուք շնորհօք գիտութեանց, և ընդ խնամովք հոգևոր Հօրդ հասարակաց լիցուք բարեկիրթ հպատակք, ամէն։

ՍԱՐԿ. ԴԱՒԻԹ ՍԱԹՈՒՆԵԱՆՑ։

1874 -Դ ի 28 Սեպտեմբերի

Ի Ս. Էջմիածին։

(Ի Հ՚Եմարանի կարդացուածոցդ.)

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵ՛Տ.

Հայութիւն, որ տարագիր գրեա թէ ընդ ամենայն տիեզերս, ի մի կրօն միանալովն՝ յաւերժացաւ ցարդ՝ և յաւերժասցի ցկատարած աշխարհի, և այս միայն այնու՝ զի կենդրոն կրօնի Մայր Աթոռս Էջմիածին կացցէ հաստատուն. և պաշտօնեայք, որոց յանձն է տնտեսութիւն Տանս Մեծի՝ ըստ պահանջից ժամանակին լիցին ուսեալք ի գիտութիւնս և կիրթք ի քաղաքականութեան, զի կարողք լիցին զ՚ի տանէս ստացեալ վսեմա-

կանն զյանձնարարութիւն ի կատար ածել, և գետահետել զմիութիւն անլուծանելի ի Հայս տարագրեալս ընդ քառածագ կողմն աշխարհի, և կրօնին և ազգային պաշտամանց ջատագով կալ։

Ամենապատիւ Հայրապետ, Հոգին Սուրբ, որ զՁեր Օծութիւն բարձրացոյց ի փոքու հետէ յընդհանրական հովուութիւն Հայոց՝ Նա եւ Ձեզ գիտել զմեծ ջանից պէտս առ օգուտ լրութեան Ազգիս Նովաւ խնդացայք, թէ Հայութիւն՝ որ քակիլ թուէր յետ բառնալոյ միութեան ըստ քաղաքականին, անլոյծ պահելով զկրօնական միութիւն՝ եկաց և կացցէ։ Քաջ գիտացիք թէ՝ կրօնն է ներքին զգացումն սրտի, որ զմի կրօն ունին՝ ի մի զգացումն միանան, և որք մի են զգացմամբ՝ զմի կազմեն ամբողջութիւն, զոր չորթել ոչ ինչ զօրեն ո՛չ սուր, ո՛չ հուր և ո՛չ ամենայն մեքենայութիւնք, միայն ահարկու այսմ միութեան՝ է տգիտութիւն, որ չգիտելով յարգել զապագայ բարիս միութեան, յինչ ինչ պատահարաց սախրեալ լուծանէ զայն կապ ի կորուստ անձին և ի հարուած միութեան։ Իսկ Ձեր ջան, Օծեալդ Աստուծոյ, եղև ի բաց բառնալ զտգիտութիւն, և սփռել զհամատարած լոյս գիտութեան ի Հայս, զի գիտութեամբ համարեցայք փրկութիւն Հայաստանեայց։

Որպէս յայտ է ի գործոց Օծեալ Տէրութեանդ, յօրէ ամբառնալոյ Ձեր յԱթոռ Կաթուղիկոսութեան ամենայն Հայոց՝ զերթ այր բազմափորձ ճգնեցայք ցանց զխոչ բազմանձիռ ի բաց լուծանել։ Մեծ էին աշխատութիւնք Ձեր ի ճիգս յայնոսիկ, բայց մեծ և արգասիքն։ Զի որչափ մեծ գործքն են, այնքան մեծ և մրցանակքն գործող ճակատու՝ որոց զպսակս ընկալաւ Աստուածաբեալ Քահանայապետութիւնդ ի ճակատն իւր Օրհնեալ։

Եթէ այսչափ մեծութիւնք միացան ի մի անձն գործօղ, ապաքէն քանի՛ մեծ Վեհափառ Տէրդ Տ Հայրապետ, Նա, որ զմեծս խորհեցաւ, և առանց ընկճելոյ ընդ մեծութեամբն՝ յանդ եհան։ Մեծ էին խորհուրդք Ձեր վասն յանշքութենէ ի պայծառութիւն վերածելոյ զնշխարս Հայրենեաց, որք իբրև կրօնական աւանդք՝ սրբազանք, իբրև հայրենեաց հնութիւնք՝ յարգոյք։ Եւ Դուք, զմտաւ ածելով թէ՝ չիք ինչ զրաւիչ մտաց քան զկրօնական պաշտամանց և աւանդութեանց զօրութիւն և քան զնշխարս մնացեալս ի հնութեանց հայրենեաց, առ ի ամփոփել զնոսա՝ կառուցիք զերկս խորանս հոյակապս։ Մեծ էին հոգացմունք Ձեր վասն յառաջադիմութեան Ազգիս, սակայն ոչ իբրև վեհերոտ զոք յետս նահանջեցայք, այլ բարեզարդեցիք, Նախ՝ զՏպարանն և ապա զԳրադարանն. և ջան ի գործ դնէք յերեւան ածել զառ ի Նախնեաց ըղձալին մեզ հանգամանաց զպարագայս։ Եւ աղբերացուցանէք առ Հայութիւն համօրէն ի վճիտ ակնէ զվտակս կրօնական գիտելեաց։

Մեծ կոչեցաւ Աղէքսանդրոս Մակեդոնացի հատանելով զԳորդեան հանգոյց, որով ոգի էառ սկսանել զաշխարհակալութիւն։ Մեծ կոչիք և Դուք. Վեհափառ Հայրապետ, թէպէտ ի ձեռին չունիք զսուր, այլ մանրակրկիտ հետազօտութեամբ լուծիք ոչ սակաւ զնոյնպիսի հանգոյցս, ո՛չ առ ի տիրել աշխարհաց և յաւելուլ զխառնիճաղանճս, այլ ի կարգաւորութիւն ածել ըղհաւատացեալ փոքրիկ Հօտն։ Եւ լուծմունք սոյնպիսի հանգուցաց փառաւորեսցեն զանուն Ձեր, և հաշակ հարցեն զմեծութենէ անձինդ, մանաւանդ վերջնոյս ձեռնարկի, — Ճեմարանիս ասեմ, որ իբրև զրագոնդիկոն յեռեալ ի հանդէպ ոսկի ի միջոյ ականց ճաճանչաւէտ ճառագայթէ։ Ցայս Ձեր ձեռնարկ բարձրացաւ Աթոռ Հայրապետական, բարձրացին զատափարակք կրօնի ի մշակութիւնս գիտութեանց, որոց այսօր յառաջին աստիճան վերաթևել տայք Հայ մանկտւոյն, բանալով զդրունս Ճեմարանիս։

Եթէ անցք ինչ երևելիք դարադլուխ կացին ի պատմութիւնս ազգաց, ապաքէն և օրս այս նշանաւոր ի տարիս և ի դարս թուի՝ դարադլուխ կալոց է ի պատմութեան Հայկականս։ Զի ի սմա փախճան զնին տգիտութեան։ Ի սմանէ գետահետել ուղիղ բանիբուն հոգևոր մշակաց՝ զկորդացեալ վայրս մտաց մշակեսցեն։ Ի սմանէ ճշմարիտ սպասաւորաց կրօնի ստացեալ զգիտութիւն ծառայելոյ Աստուծոյ և մարդկան՝ Խաչ ի ձեռին և Աւետարան յընդհանուր քարոզս եկեսցեն առ ի զամբիծն շնորհել կեանս ի ձեռն կրօնի։ Սա է աղ-

բիւր ջրոյ կենդանութեան, յորմէ հասեալին վըտակք ի յառաջել զխամբեալ և աղաղեալ բանաւոր բուրաստանի տունկս Հայրենեաց։ Սա է դարաստան համասպրամ ծաղկանց՝ որոց անուշահոտութիւն ի բաց վտարեսցեն զապականեալ օդ հայրենեաց, որ ապականեալ իցեն ի ծակամուտ յուղկահարաց։ Սա է շտեմարան փրկութեան։ Սա տաղաւար վանատուր թշուառացելոց ի բաղդէ։ Օրհնեցէ՜ աջ Անեղին զայս Տաճար։ Օրհնութիւն Տեառն Ամենակալի ի Ձեզ, Հա՜յրդ Գէորգէս։ Օրհնեաց Տէր զմուտ Ձեր փրկութենաբեր յԱթոռ Կաթուղիկոսութեան։ Հովանի եկաց, և Դուք սխրագործեցիք։ Հովանեսցէ՛ զՁեր կեանս զի արգասիք Թանկագնոյ կենացդ առանց խոչընդոտից լիցին։

Իսկ այս համագումար ակումբ, որ Ձեօք համբուրեն զայս Նոր զարագլուխ Հայ հոգևորականութեան, զանուանակցի Ձեր քաջամարտիկն Գէորգեայ զօրավարի առ Ձեզ շնորհաւորելով զտօն՝ Օրհնութեան ի Ձէնջ ակն ունին։ Արդ՝ օրհնեցէ՛ք Վեհափառ Տէր, զայս երամ, որ ի բուրվառ հայցուածոց զմաղթանս յԱթոռ Էջին խնկեն վասն բարօրութեան կենացդ, և յարատևման ճեմարանիս. զոր Տէր յաջողեսցէ, ամէն։

ԽՆՈՎՔ ՍԱՐԿ. ՄՈՎՍԻՍԵԱՆ.

Ի 28 Սեպտ. 1874 ամի

Ի Ս. Էջմիածին։

ՈՒՂԵՐՁ

ՅԱՒՈՒՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԲԱՑՄԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ.

Ա.

Ո՜հ, զի՞ չըքնաղ ըզգացմանց ի վառ՝
Ցուցլին այսօր հոգեպարար
Հրապոյրք ի միտս, ի սիրտս կայտառ,
Եւ յորդեն իղձք ի Հայորեար։

Ո՞չ այս հանդէս վեհ եւ շքեղ—
Մինչ աստ պաշտին յօրհներգս գեղգեղ
Նաւակատիք Տանս փառահեղ—
Գուշակ է քաջ յուսոյ ի գեղ։
Ո՞չ այս հանդէս քաղցր աւետեաց
Հընչէ ըզձայն Հայաստանեայց,
Հարսին լուսոյ տայ հրճուաղդեաց,
Ի ձայն հրաւէր՝ ի վայրս դալրեաց։
Յորում ահա ի Թեւս ուխտից
Հանդխակցեալ կարօտալից
Նա եւ ՈԳԻ Սուրբ Հայազնից,
Վերասլանան մաղթանք սրտից։

Բ.

Փա՜ռք միշտ ձեռին Նըւիրական,
Որ զայս կանգնեաց ըզճեմարան,
Եւ խանդակաթ յիղձս եռանդեան
Բանայ ըզդրունան՝ գործել ի ջան։
Ո՜հ, զի՞ վըսեմ՝ լայն ասպարէզ
Հարթեաց սովաւ յուսմունս պէսպէս,
Որ հոլովեսցէ յայս սուրբ կրկէս
Ամենակալ Աջըն՝ անմերձ։
Սա է երկիր, սուրբ, բանաւոր,
Ոչ աւետեաց եւ մեղրածոր,
Եւ ոչ կաթին առակաւոր,
Այլ փրկութեան մեր հոգեւոր։
Սա սըփռեսցէ զեռանդս սուրբ Հարց
Մեծն Գրիգորի եւ Թարգմանչաց
Սահակ, Մեսրոպ, ու՝ հետեւողաց,
Ի սիրտս համայն այսց ժառանգաց։

Գ.

Պահեա՛ Աստուած, զայս նոր Տաճար
Յօգուտ, ի փառս Հայութեան յար.
Պայծառացո՛, Տէ՛ր բարերար,
Ցարդիւնս առատ եւ պերճափառ։
Եւ ընդ սըմին միշտ պանծասցի
Ի փառաւոր յիշատակի
ԱՆՈՒՆ սորին Վեհ Հիմնադրի՝
ՏԷՐ ՏԷՐ ԳԷՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏԻ։

Վ. Վ. ՄԱՆԿՈՒՆԻ.

բիւր ջրոյ կենդանութեան, յորմէ հոսեցին վըտակք ի յոռոգել զխամբեալ և աղաղեալ բանաւոր բուրաստանի տունկս Հայրենեաց: Սա է դաբաստան համասպրամ ծաղկանց՝ որոց անուշահոտութիւն ի բաց վտարեսցեն զապականեալ օդ հայրենեաց, որ ապականեալ իցեն ի ծականուտ յուղկահարաց: Սա է շտեմարան փրկութեան: Սա տաղաւար վանատուր թշուառացելոց ի բաղդէ: Օրհնեցէ՛ աջ Անեղին զայս Տաճար: Օրհնութիւն Տեառն Ամենակալի ի Ձեզ, Հա՜յրդ Գէորգէս: Օրհնեաց Տէր զմուտ Ձեր փրկութենաբեր յԱթոռ Կաթուղիկոսութեան: Հովանի եկաց, և Դուք սխրագործեցիք: Հովուեսցէ՛ զՁեր կեանս զի արգասիք թանկագնոյ կենացդ առանց խոչընդոտից լիցին:

Իսկ այս համագումար ակումբ, որ Ձեօք համբուրեն զայս Նոր զարագլուխ Հայ հոգևորականութեան, զանուանակցի Ձեր քաջամարտիկն Գէորգեայ զօրավարի առ Ձեզ շնորհաւորելով զոսն՝ Օրհնութեան ի Ձէնջ ակն ունին: Արդ՝ օրհնեցէ՛ք Վեհափառ Տէր, զայս երամ, որ ի բուրվառ հոյզուածոց զմաղթանս յԱթոռ Էին խնկեն վասն բարօրութեան կենացդ, և յարատևման ճեմարանիս. զոր Տէր յաջողեսցէ, ամէն:

ԽՆՈՎ.Ք ՍԱՐԿ. ՄՈՎՍԻՍԵԱՆ.

Ի 28 Սեպտ. 1874 ամ.

Ի Ս. Էջմիածին:

ՈՒՂԵՐՁ

ՅԱՒՈՒՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԲԱՑՄԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ.

Ա.

Ո՛հ, զի՞ չքնաղ ըզգացմանց ի վառ՝
Յուզին այսօր հոգեպարար
Հրապոյրք ի միտս, ի սիրտս կայտառ,
Եւ յորդեն իղձք ի Հայորեար:

Ո՞չ այս հանդէս վեհ եւ շքեղ—
Մինչ աստ պաշտին յօրհներգս գեղգեղ
Նաւակատիք Տանս փառահեղ—
Գուշակ է քաջ յուսոյ ի դեղ:

Ո՞չ այս հանդէս քաղցր աւետեաց
Հընչէ ըզձայն Հայաստանեայց,
Հարսին լուսոյ տայ հրճուաղդեայց.
Ի ձայն հրաւէր՝ ի վայրս դալրեաց:

Յորում ահա ի Թեւս ուխտից
Հանդխակցեալ կարօտալից
Նա եւ ՈԳԻ Սուրբ Հայազնից,
Վերասլանան մաղթանք սրտից:

Բ.

Փա՛ռք միշտ ձեռին Նըւիրական,
Որ զայս կանգնեաց ըզՃեմարան,
Եւ խանդակաթ յիղձս եռանդեան
Բանայ ըզդրունան՝ գործել ի ջան:

Ո՛հ, զի՞ վըսեմ՝ լայն ասպարէզ
Հարթեաց սովառ յուսմունս պէսպէս,
Որ հովուեսցէ յայս սուրբ կրկէս
Ամենակալ Աջըն՝ անմերձ:

Սա է երկիր, սուրբ, բանաւոր,
Ոչ աւետեաց եւ մեղրածոր,
Եւ ոչ կաթին առակաւոր,
Այլ փրկութեան մեր հոգևոր:

Սա ըզփոխեսցէ զեռանդս սուրբ Հարց
Մեծն Գրիգորի եւ Թարգմանչաց
Սահակ, Մեսրոպ, ու՝ հետեւողաց,
Ի սիրտս համայն այսց ժառանգաց:

Գ.

Պահեա՛ Աստուած, զայս նոր Տաճար
Յօգուտ, ի փառս Հայութեան յար.
Պայծառացո՛, Տէ՛ր բարերար,
Յարդիւնս ատոք եւ պերճափառ:

Եւ ընդ սըմին միշտ պանծասցի
Ի փառաւոր յիշատակի
ԱՆՈՒՆ տորին Վեհ Հիմնադրի՝
ՏԷՐ ՏԷՐ ԳԷՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏԻ:

Վ. Վ. ՄԱՆԿՈՒՆԻ.

ՈՒՂԵՐՁ

ՑԵՒՈՒՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԲԱՑՄԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՍԲՌՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ։

Ո՛հ զի՛ չըք նաղղգաց մանց ի վառ յու զին այ սօր հո դև պա բար
Փառք միշտնե ոլենը ւիրա կան որ զայսկանգ նեացըզ ճեմա բան.

Հրա պոյրքի միտսի սիրտսկայ տառեւ յոր դեն խղօք ի հայ որ եար։
Եւ խանդա կաթ յիղմս եռան դեանրա նայ ըզ դրունս զոր ծել ի ջան։

Ցոդ. Ոչայս հան դէս վեհեւ շը քեղ մինչաստ պաշ տին յօրհներգս դեղ դեղ
Այս է եր կիր սուրբրա նա ւոր ոչ ա ւե տեաց եւ մեղ բա ծոր

Ճաւա կա տիք Ցանսվա ռա հեղ գուշա կէ քաջ յու սոց ի զեղ։
Եւոչ կա Թին առա կա ւոր, այվիբր կու Թեան մեր հո դե ւոր։

Ոչ այսհան դէս քաղցր ա ւե տեաց հրն չէ ըզծայն հա յատան հայց
Ոհ զվվը սեմ լայն ա սպա բէզ հար Թեաց սուվաւ յուս մունսպէս պէս.

Հար սինրու սոյ տայ հը բնուաղ գեաց ի ծայնհրա ւէր ի վայրաղալ բեաց։
Որ հովուես ցէ յայս սու բրկբր կէս Ա. մենա կալ Ա. ջընան մերն։

Ցո բում ա հա ի Թեւս ուխ տից հան դի սա կ ցեալ
Սա սբի ռես ցէ զե ռանդս սուրբ հարց մեծ Դրի զո բի

կա բստա վից, Նա եւ ո դի սուրբ հա յազ Նից, Վե բա
եւ Թարգման չաց, Սա հակ Մես բովր, հե տե ւ ղաց Ի սիրտս

սա Նան մաղ Թանք սբր տից։
հա մայն այաց ժա ռան դաց։



ՁԱՅՆԱԳՐԵԱՑ

Ն. Ս. ԹԱՇՃԵԱՆ։

ՆԵՐԲՈՂ

ԱՍԱՑԵԱԼ Ի ՄԵԾԱՀԱՆԴԷՍ ԲԱՅՄԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԱՅՈՑ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Ի ԴԷՄՍ

ԱԶԳԱՍԷՐ ՀԻՄՆԱԴՐԻ ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Փ.

ՇՆՈՐՀԱՎԱՐՔ ԵՒ ԱԶԳԱՍԷՐ ՎԵՀ ՀԱՅՐԱՊԵՏ.

Ա.

Զնսեմատուեր սուգ թախծութեան Լուսածին Մօր Հաւատոյ
Անեղին կամք ի բաց վարէ ընդ ձեռն Իւրոյ Ընտրելւոյ.
ԶԳէորգիէ Մեծ Հայրապետ կարգեալ յԱթոռ Քրիստոսեան՝
Հրաւէր կարդայ յոլորտս ցրուեալ պանդուխտ որդւոց Հայկազեան,
Եթէ ,,եկայ՛ք սիրայորդոր և գունդագունդ ի զիրկ Մօր,
Ցորմէ դահիճք վաղակաւորք զերդ զմանուկ ոք անզօր
Թէպէտ կորզեալ անժամանակ արարին որբ՝ տարագիր,
Բայց արդ ժպիտ նոր փողփողէ ի սուրբ ճակատն լուսալիր,
Նորարոզբոջ սիրոյ է այն Նշանակ մեծ և պայծառ,
Օ՜ն վութացէ՛ք, որդիք Հայկայ ի փրկութեան ձեր Տաճար.,,

Եւ յերկնապատգամ յայս ձայն աւետեաց՝
Յափանց Պոնտոսի և ծովուն Կասպեաց՝
Դշխոյն Եւրոպէ յղէ սիրավառ
Զմանկունս Հայոց յիմաստից Տաճար·
Կուր ընդ Երասխայ բարձեալ զկարկաջ
Զայս լուր աւետեն ընդ Կովկաս համայն,
Եւ Տիգրիս Եփրատ ալիօք յարադուարճ
Տանին զայն արագ ընդ բնաւ Հայաստան։

Բ.

Ազնուափայլն Մայր Հայաստան՝ դարձեալ զգենու զիւրն ասպար,
Զայն՝ զոր երկաթք բազմախողխողք բազմիցս հարին փայրապար,
Զքնաղ է այն քան զԹագ փառաց և լաւ քան զնուրբ ծիրանի,
Եւ չէ ինչ հնար առնանել այնմ զոր դարձեալ ագանի·
Այն երկնառաք սիրոյ է ջահ առ կրօնս լեզու ազգային,
Որ յարդարէ զեղապաճոյճ զոգի և զմիտս մարդկային,
Վահան է այն անթափանցիկ ի բիւր նետից ասոխաց,
Վէմ արաստոյ յորմէ փախեան ի հնումն ամբոխք մազդեզանց·
Որով Վարդան, Մեսրովպ, Սահակ յաւելին զփառս Հայութեան,
Զոր վեհին կամք դարձեալ բաշխէ ի զրահ Կրօնից փրկութեան·
Խայտան աւերակք հին հին քաղաքաց,
Վանորայք զգենուն զնախկին զարդս փառաց,
Գոհութեան հնչեն զերգս և զպարելուս,
Քանզի նոր ծագէ կրօնին արշալոյս,
Ոգիք տարաբնակ պանդուխտ Հայկազանց
Մեծաջահ այսօր վառ ի վառ փայլին,
Եւ ընդ անբարբառ ոգւոց քաջ Նախնեաց
Ի խինդ ողջունեն զսուրբ Էջմիածին։

Գ.

Զէջմիածին՝ զԳերագահ Աթոռ սրբոյն Գրիգորի
Յոր դիմեալ գայք յերկնահրաւէր ձայնին ի շուինդ տենչալի·
Ո՜ Հայկազունք, հանդիսատեսք սերկեան տօնիս մեծապանծ,
Այլ ևս կարէ՞ք ինչ զարմանալ ընդ ցնծութիւն հայրենեաց·
Քանզի անձամբ յակն արկանել զհոյակապս զայս Տաճար,
Վիճակեցին ձեզ երկնից կամք գալով յԱթոռս հրաշափառ.
Որ Գահակալ Գէորգիէ մերս Ազգասէր Հովուապետ՝
Կանգնէ ի ձօն իմաստութեան՝ ժողովեալ առ զՀայկեան ձեռ,
Չիցէ՞ արդեօք սա ապացոյց սիրոյն զօրեղ առ Ազգ մեր,
Եւ ի՞ւ պակաս քան զոր ցուցին Վարդանք, Ներսէսք Ազգասէր·
Գեր քան զնոցին սէր Վեհին է հանճար.
Զի եթէ ի հնումն զեզերէին յար
Յաթենս, Բիւզանդիոն, յԱղէքսանդրիա,
Հայ մանկտին այսօր ի հայրենիս գայ,

Եւ ընդ գիտութիւնս ժառանգեալ ձրի,
Զսէր հայրենեաց, կրօնի և լեզուաց՝
Անլուծանելի շաղկապաւ յարի
Յէջմիածին սուրբ ի յոյս հայրենեաց.

Դ.

Զուարճացի՛ր Կաթուղիկէ Եկեղեցի և բերկրեա՛ց,
Զի զվաղեմի տենչ քո և զմեր Փեսայդ արի կատարեաց.
Ահա մանկունք՝ որք ամբարեալ ի միտս զհետս իմաստից՝
Յաշխարհ իւրեանց գնասցեն ուրախ զերդ նաւք զանձուք բարելից,
Եւ յորդառատ ծաւալելով զպարգևըս ձոխս, զոր ետուր,
Ի սէր քոյին բեւեռեսցին զսիրտս որդւոցդ ի տրիտուր.
Ժառանգաւո՛րք սուրբ Աթոռոյ ծերք և տղայք յերգս քաղցունս
Զհոգևոր Ծնողին զգործոց հարէք հռչակ յընդհանուրս,
Լերո՛ւք Սմա ժիր գործակիցք և ձեռնտուք վաստակոց,
Զի առկայուն լիցի Տաճարս և աննկուն ի հողմոց.
Օ՛ն ի բաց եկեսցեն չարիք և նախանձ,
Շա՛տ են բիւր աղէտք թշուառ հայրենեաց,
Թո՛յլ տուք զի ժամ Մօր բազմաթախիծ
Մշտափայլ կացցէ ի ճակատն ամբիծ.
Զի ի Տաճարէս եկեսցեն յասպարէզ
Հովիւք քաղցրուսոյցք, տեսուչք բանիբուն,
Ախոյեանք արի՝ մրցմանց ի հանդէս,
Նեցո՛ւկք Հայ ազգի, սարսա՛փք թշնամւոյն.
Բարէ՛, քանի՞ սքանչելի է մտացդ ծնունդ հանուրց Հա՛յր,
Զսա Բէլական շանթից ընդդէմ կանգնեցեր Դու զօռ պատուար,
Որ զդիւցազին մերոյ Հայկայ ի յուշ ածէ զյի՛շատակ,
Որով կրկին վերընձիւղեալ ազգայնութեան մեր պարծանք,
Դարուց ի դարս յաւերժասցի անուն Վեհիդ գերապանծ,
Եւ Հայութեան կրօն և լեզու սովաւ կացցէ անմոռաց
Զքնա՛ղ ձեռնարկ, արդա՛րև յորդ աղբիւր կաթին հոգևոր,
Որում կարօտ խոստովանին զանձինս որդիքդ բիւրաւոր,
Ոյց սիրատրոփ 'ւ երախտագէտ սրտից լինել յայտարար
Ջերկմոխ՝ բնաւ Վեհիդ հանդէպ՝ կանգնողիդ զայս պերճ Տաճար.
Հապ՝ օն բազմերամ ի ջերմ ի համբոյր
Աջո՛յն՝ որ հաստեաց զՏաճար լուսափիւռ,
Հայրապետական Գլխոյն վեհապանծ
Մատուսցուք զաւիներս ի պսակ պարծանաց,
Եւ սրտաբորբոք կեցցէ՛ք երկար,
Օ՛ն հնչեցուսցուք բղխմամբս սրտին,
Ընդ որս վերձեմէլ յանմահութեան ծայր
Վճռեալ է Գէորգ սուրբ Հայրապետին.

Ի 28 Սեպտեմ. 1874 ամ
Ի Վաղարշապատ:

Մ. Տ. Դ. ՄԱՐՈՒԹԵԱՆՑ.